1. **Որո՞նք են GUSD մագնետ տարրական դպրոցները:**
Մագնետ դպրոցները աշակերտներին առաջարկում են եզակի, թեմայի վրա հիմնված ուսումնական փորձառություններ ակադեմիական հարուստ և մշակութային բազմազան միջավայրերում: Բոլոր մագնետ ծրագրերը բավարարում են Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի դասարանային փոխադրման և ավարտական պահանջները: Բացի այդ, GUSD-ի մագնետ տարրական դպրոցներից որոշ դպրոցներ առաջարկում են Երկլեզու ուսուցման ծրագրեր: Դիմորդները կարող են դիմել նաև այդ ծրագրերին:

2. **Ո՞վ կարող է դիմել GUSD-ի մագնետ տարրական դպրոցներ:**
GUSD-ի տարրական դպրոց ընդունվելու իրավունք ունեցող աշակերտները կարող են դիմել GUSD-ի մագնետ տարրական դպրոց: GUSD-ի սահմաններից դուրս դպրոց ընդունվելու իրավունք ունեցող աշակերտները կարող են դիմել GUSD-ի մագնետ տարրական դպրոց, սակայն նրանցից կպահանջվի իրենց բնակության կրթաշրջանից ազատման թույլտվություն և միջկրթաշրջանային թույլտվություն ստանալ, եթե նրանք ընտրվեն մագնետ դպրոցի համար:

3. **Կա՞ն սահմանափակումներ դիմելու համար:**
Որոշ դասարանային մակարդակի սահմանափակումներ են կիրառվում կոնկրետ ծրագրերի համար: Բնակության վայրի հաստատման պահանջները չեն կիրառվում անօթևան աշակերտների համար, ովքեր իրավասու են գրանցվելու, ինչպես սահմանված է Անօթևանների կրթության կապի գրասենյակի կողմից. հեռախոսահամար՝ (818) 241-3111 x1500: Բոլոր իրավասու դիմորդները ստանում են հավասար ուշադրություն և ընտրվում են աշակերտների պատահական ընտրության գործընթացի միջոցով՝ ըստ մագնետ տարրական դպրոցի ընտրության առաջնահերթությունների:

4. **Արդյո՞ք մագնետ տարրական դպրոցի ներկայիս գրանցված աշակերտները պետք է լրացնեն դիմում՝ մագնետ դպրոցում ուսումը շարունակելու համար:**
Այն աշակերտները, ովքեր ներկայումս հաճախում են մագնետ դպրոց, կարիք չունեն կրկին դիմել դպրոցում իրենց տեղի համար:

5. **Արդյո՞ք մագնետ տարրական դպրոցում ներկայումս ընդունված աշակերտների քույրերն ու եղբայրներն առաջնահերթություն են ստանում դիմումի գործընթացում:**
Այն դիմորդները, ովքեր ձգտում են տեղավորվել այն դպրոցում, որտեղ իրենց քույրն ու եղբայրը ներկայումս գրանցված են և հաճախում են, ինչպես նաև կշարունակեն հաճախել գալիք ուսումնական տարում, առաջնահերթություն կունենան այն դիմորդների նկատմամբ, որոնք դպրոցում ներկայումս գրանցված քույր ու եղբայր չունեն: Կրթաշրջանի սահմաններում բնակվող քույրերն ու եղբայրներն առաջնահերթություն կունենան կրթաշրջանի սահմաններից դուրս բնակվող քույրերի և եղբայրների նկատմամբ: Քույրը կամ եղբայրը պետք է ապրեն նույն ընտանիքում և ունենա առնվազն մեկ ընդհանուր ծնող/խնամակալ:

6. **Արդյո՞ք GUSD-ի սահմաններում բնակվող դիմորդներն առաջնահերթություն ունեն այն դիմորդների նկատմամբ, ովքեր բնակվում են GUSD-ի սահմաններից դուրս:**
GUSD-ի սահմաններում բնակվող դիմորդներն առաջնահերթություն ունեն GUSD-ի սահմաններից դուրս բնակվող դիմորդների նկատմամբ: Այնուամենայնիվ, GUSD-ի սահմաններում բնակվելը չի երաշխավորում նոր դիմորդների ընդունելությունը մագնետ տարրական դպրոց/ծրագիր:

7. Ես պե՞տք է մասնակցեմ շրջայցի դպրոցում՝ մագնետ դպրոց դիմելու համար**:**
Մագնետ տարրական դպրոցների շրջայցերը խստորեն խրախուսվում են ձեր ընտրությունից առնվազն մեկի, եթե ոչ բոլորի համար: Եթե ձեր երեխան ընտրվել է մի դպրոցի համար, ուր դուք չեք շրջագայել, ձեզնից կարող է պահանջվել շրջայց կատարել նախքան գրանցման ավարտը:

8. Եթե ես կրթաշրջանի սահմաններից դուրս եմ բնակվում**,** ի՞նչ պետք է ներկայացնեմ իմ գրանցման փաթեթից բացի**:**
Բացի գրանցման փաթեթից, GUSD-ի սահմաններից դուրս պատահական ընտրության գործընթացի միջոցով ընտրված աշակերտները պետք է ազատման թույլտվություն ստանան իրենց բնակության կրթաշրջանից՝ գրանցման ընթացակարգերն ավարտելու համար: Սա ներառում է ազատման թույլտվություն ստանալն իրենց տարածքային կրթաշրջանից: Միջկրթաշրջանային թույլտվությունները կախված են դպրոցներում առկա տեղերից/տարողունակությունից, դասարանների մակարդակներից և մասնագիտացված ծրագրերից:

9. Եթե ես ներկայումս տարրական մագնետ դպրոցի համար սպասացանկում եմ**,** արդյոք պե՞տք է նորից դիմեմ գալիք ուսումնական տարվա համար**:**
Բոլոր այն աշակերտները, ովքեր ցանկանում են ընդունվել մագնետ տարրական դպրոց գալիք ուսումնական տարվա համար, պետք է դիմեն: Սպասացանկն իր ուժը կորցնում է սեպտեմբերի 30-ին:

10. Կա՞ քանակային սահմանափակում տարրական մագնետ դպրոցներ դիմելու համար**:**
Դիմորդները կարող են ճշել մինչև երեք ծրագրի ընտրություն: Դիմորդներից չի պահանջվում մեկից ավելի ընտրություն կատարել: Առցանց դիմումը լրացնելու համար սեղմեք Դիմել/apply/ ներդիրի վրա:

11. Արդյո՞ք անհրաժեշտ է գնահատում՝ մագնետ տարրական դպրոց ընդունվելու համար**:**
Տարրական մագնետ դպրոց դիմելու համար ոչ մի գնահատում չի պահանջվում, բանի դեռ դուք չեք դիմել դպրոցում Երկլեզու ուսուցման ծրագրի համար:

12. Ինչպե՞ս կարող եմ ներկայացնել իմ դիմումը**:**
Մագնետ դպրոցի համար դիմումը հասանելի կլինի առցանց ներկայացնելու համար՝ դիմումների ընդունելության ընթացքում: Աշակերտների պատահական ընտրության մեջ կներառվեն միայն մինչև վերջնաժամկետը ներկայացված իրավասություն կրող դիմումները:
13. Արդյո՞ք դիմումները հաստատվում են ըստ դիմումների հերթականության**:**
Բոլոր դիմումները, որոնք ներկայացված և լրացված են նախքան դիմումի վերջնաժամկետը, իրավասու կլինեն ներառվել Աշակերտների պատահական ընտրության մեջ և առաջնահերթություն չունեն՝ ըստ ներկայացման ամսաթվի: Դիմորդի ընտրությունը որոշվում է այս պատահական ընտրության գործընթացի միջոցով՝ ըստ տարրական մագնետ դպրոցի ընտրության առաջնահերթությունների:

14. Ինչպե՞ս կտեղեկանամ**,** որ իմ դիմումը դպրոցը ստացել է**:**
Դուք հաստատում կստանաք էլ. նամակի տեսքով առ այն, որ ձեր դիմումը դպրոցը ստացել է, և դուք կկարողանաք ձեր դիմումի կարգավիճակը ստուգել առցանց: Եթե Աշակերտների պատահական ընտրությունից հինգ օր առաջ հաստատող նամակ դեռ ստացած չլինեք, կապ հաստատեք Աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակի հետ (818) 241-3111 ներք. 1283 հեռախոսահամարով:

15. Ի՞նչ կլինի**,** եթե իմ դիմումը դպրոցը ստանա վերջնաժամկետից հետո կամ չստանա**:**
Դիմումները չեն մասնակցի Աշակերտների պատահական ընտրությանն առանց դիմումի վերջնաժամկետի օրը/ժամը կամ դրանից առաջ ներկայացման ապացույցի:

16. Կարո՞ղ եմ փոխել ծրագրի իմ ընտրությունը(ները)ը դիմումս ներկայացնելուց հետո:
Ծրագրի ընտրության(թյունների) մեջ ցանկացած փոփոխությունն ՊԵՏՔ է կատարվի՝ դիմելով Աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակ (818) 241-3111 ներք. 1283 հեռախոսահամարով: Մեկից ավելի դիմում ներկայացնելու դեպքում պատահական ընտրության գործընթացում դիտարկվելու է միայն ամենավերջին դիմումը. բոլոր նախկին դիմումները կկորցնեն իրենց ուժը:

17. Ե՞րբ է տեղի ունենալու աշակերտների պատահական ընտրությունը:
Աշակերտների պատահական ընտրությունն անցկացվում է փետրվարի երկրորդ չորեքշաբթի օրը: Այն բաց է հանրության համար:

18. Ինչպե՞ս և ե՞րբ կտեղեկացվեմ Աշակերտների պատահական ընտրության արդյունքների մասին:
Արդյունքները էլեկտրոնային փոստով կուղարկվեն բոլոր դիմորդներին՝ աշակերտների պատահական ընտրությունից հետո:

19. Ինչպե՞ս կարող եմ ապահովել իմ երեխայի տեղը մագնետ դպրոցում:
Մագնետ դպրոց ընդունվելու մասին ծանուցումից հետո կրթաշրջանի համար պահանջվող գրանցման փաթեթը պետք է լրացվի և վերադարձվի մագնետ դպրոց՝ այն ստանալուց հետո երեք շաբաթվա ընթացքում: Տարրական մագնետ դպրոց ընդունվելը չի հաստատվում, քանի դեռ գրանցման փաթեթը լրացված և հաստատված չէ դպրոցի կողմից. սա ներառում է բոլոր թույլտվությունների պահանջները, ինչպես կիրառելի է:

20. Ի՞նչ կլինի, եթե ես չլրացնեմ գրանցման փաթեթը երեք շաբաթվա ընթացքում: Եթե ընտրված դիմորդները երեքշաբաթյա ժամկետում չլրացնեն գրանցման փաթեթը, նրանց դիմումը կկորցնի իր ուժը: Բաց թողնված տեղերը կտրամադրվեն սպասացանկում առկա հերթական դիմորդին:

21. Եթե իմ դիմումը չընդունվի տարրական մագնետ դպրոցի համար, ինչպե՞ս կարող եմ որոշել իմ երեխայի «տարածքային» տարրական դպրոցը:
GUSD-ն ունի «Street Finder» կարգաթը կրթաշրջանի կայքի գլխավոր էջում՝ www.gusd.net, որը կարող է տրամադրել ձեզ այս տեղեկությունը կամ կարող եք ուղղակի այցելել Street Finder էջ՝ սեղմելով այստեղ:

22. Կարո՞ղ եմ մնալ այն ծրագրերի սպասացանկում, որոնց դիմում եմ, եթե ընդունեմ որևէ առաջարկ:
Մեկ ծրագրում տեղ զբաղեցնելուց հետո բոլոր մյուս առաջարկներն ինքնաբերաբար մերժվում են:

23. Որքա՞ն ժամանակ կգործի սպասացանկը:
Սպասացանկերը կպահվեն մինչև սեպտեմբերի 30-ը:

24. Ի՞նչ է պատահում մագնետ դպրոցում սովորողի գրանցման կարգավիճակի հետ, եթե ընտանիքը տեղափոխվում է **GUSD**-ի սահմաններից դուրս:
Եթե մագնետ դպրոց ընդունված աշակերտը, ով ընդգրկված չէ Գլենդելի օտար լեզուների ակադեմիայի Երկլեզու ուսուցման ծրագրում (FLAG), տեղափոխվի GUSD-ի սահմաններից դուրս, ապա այդ աշակերտը պետք է նորից դիմի մագնետ դպրոց և վերագրանցումը կսահմանվի՝ ելնելով առկա տեղերից:

25. Փոխադրամիջոց կտրամադրվի՞:
Փոխադրամիջոց չի տրամադրվի GUSD-ի որևէ դպրոցի համար:

26. Ինչպե՞ս կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ **GUSD-**ի տարրական մագնետ դպրոցներ դիմելու վերաբերյալ:
Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ Աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակից՝ (818) 241-3111 ներքին 1283 հեռախոսահամարով: